



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 23 ՄԱՐՏ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստագրութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստագրութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ վիս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԸ

Երանի՛ անոնց, որոնք ամբասիր կեանք մը կ'ապրին,
որոնք կ'ապրին Տիրոջ Օրէնքին համաձայն:
Երանի՛ անոնց, որոնք Տիրոջ պատուիրանները կը գործադրեն,
ամբողջ սրտով անոր կը հնազանդին.
որոնք չարիք չեն գործեր, այլ՝ անոր ճամբուն մէջ կը քալեն:
Երիտասարդ մը ինչո՞վ կրնայ ինքզինք մաքուր պահել,
եթէ ոչ՝ քու խօսքերդ գործադրելով:
Ամբողջ սրտով կ'ուզեմ քեզի հնազանդիլ.
մի՛ ձգեր որ պատուէրներէդ խտտորիմ:
Շնորհք ըրէ ինձի՝ քու ծառայիդ,
որպէսզի ապրիմ եւ խօսքերդ գործադրեմ:
Սորվեցուր ինձի, Տէր, կանոններդ պահելու կերպը,
եւ մշտապէս պիտի կատարեմ զանոնք:
Քու ձեռքերովդ ստեղծեցիր եւ զիս կազմեցիր.
տուր որ հասկնամ եւ սորվիմ քու պատուէրներդ:
Փրկութեանդ կը կարօտիմ, եւ իմ յոյսս խօսքիդ վրայ դրեր եմ:
Ինչքան կը սիրեմ Օրէնքդ, ամէն օր ան է խորհրդածութեանս առարկան:
Խօսքդ ճրագ է քայլերուս, լուսաւորող՝ ճամբաներուս:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՊՈԹՔ

*Պահապան ամեն այնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի փութ եւ ի գիշերի,
ի նարիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԵԼԻՑ Ի (20) ԳԼՈՒԽ

ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ (20:15-26)

Պապուիրանը կը շարունակուի:

«Գողութիւն մի՛ ըներ»:

«Քու դրացիիդ դէմ սուր վկայութիւն մի ըներ»:

«Քու դրացիիդ քանքը մի՛ ցանկար. քու դրացիիդ կնոջը, կամ անոր ծառային, կամ անոր աղախինին, կամ անոր եզին, կամ անոր իշուն եւ քու դրացիիդ ռեւէ մէկ բանին մի՛ ցանկար»:

Կարծէք այս վերջին երկու պապուիրանները աւելի կը շեշտեն դրացիի հասկացողութիւնը: Այսպէղ կարելի է նաեւ ի մտի ունենալ այն երկխօսութիւնը Քրիստոսի եւ Օրէնքի ուսուցիչին միջեւ, ով է իմ ընկերս: Սա կը նշանակէ, դրացին նաեւ նմանն է: Անոր համար ալ ամբողջ պապուիրանները կը խորացուն հետեւեալ երկու պապուիրաններուն միջեւ. «Միրէ քու Տէր Աստուածդ, քու բոլոր սրբովդ, քու բոլոր մարմովդ, քու բոլոր հոգիովդ ու քու բոլոր զօրութեամբդ: Եւ սիրէ քու ընկերդ քու անձիդ պէս»:

«Գողութիւն մի՛ ըներ»: Գողութեան քրեական սահմանումը ուրիշին իրատունքը, վաստակը անօրէն ձեռով ձեռք ձգելն է: Սակայն, գործնականին մէջ աւելին կը քրեանենք: Նոյն այս գիրքին 21-րդ գլխուն մէջ որոշ բաներ աւելի կը յարականայ այս իմաստով, ուր կը խօսի մարդ առեւանգելուն մասին, որ նոյնպէս գողութիւն է, նաեւ երբ կը խօսի հարուստներուն մասին ըսելով թէ իրենց ծառաներուն վարձքը իրենց քով պէտք չէ պահեն, այլ խօսքով գրկել, որ կը նշանակէ գողութիւն է: Մէկու մը իրատունքը օրը օրին չհատուցանելը գողութիւն է: Սա կը նշանակէ, թէ յաճախ որոշ բաներ կամ արտայայտութիւններ պարզ կը թուին ըլլալ, սակայն, յետագայ բացատրութիւններն ու պապուիրանները կու գան յաւելեան լուսաբանութիւն քալու քու աւել պապուիրանին նկատմամբ:

«Դրացիիդ դէմ սուր վկայութիւն մի՛ ըներ»: Ընդհանրապէս Աստուածաշունչին մէջ վկայութիւն բառը դատարանական հասկացողութիւն ունի, եւ որովհետեւ ամէն հարց դատարանները պիտի քննեն, եւ որովհետեւ օրէնքը կ'ըսէ 2-3 վկայով կը հաստատուի ռեւէ իրողութիւն, հետեւաբար, մարդիկ միշտ ալ վկայութիւն քալու հարկադրանքին քակ պիտի գտնուին, եւ ճշմարտութենէն դուրս բան պէտք չէ ըսնն:

«Քու դրացիիդ ռեւէ մէկ բանին մի՛ ցանկար»: Ցանկալը մեկնակէքն է վերոյիշեալ նախկին պապուիրաններուն: Կը ցանկաս որ կը գողնաս կամ կը շնաս, եւ նոյնիսկ շահու մը ակնկալութեան հետեւանքով նաեւ սուր կը վկայես: Հետեւաբար, այս պապուիրանը կ'արգիլէ սեփականէն դուրս եղած ռեւէ մէկ բան անձին վերապահել ուզելու, որովհետեւ արիկա մարդս իր սահմաններէն դուրս կը բերէ, որ ի վերջոյ արմատն աշխարհակալութեան, բռնակալութեան, որոնք անհարկի ցանկութիւններէն յառաջ կու գան:



Տասնաբանեայ այս պապուիրանները խորացումն են Աստուծոյ օրէնքին: Հետագայ գլուխները բացատրութիւններն են, որոնք նոր լոյս կը բերեն: Այս քսանաբանեայ պապուիրաններու աւարտին Աստուծոյ յայտնութիւնը քրեղի կ'ունենայ: Ժողովուրդը քրեանելով կայծակներ եւ քարքեր նշաններ, կը վախնայ եւ չ'ուզէր լսել Տիրոջ ձայնը որպէսզի չմեռնի: Ժողովուրդը այն ըմբռնումը ունէր թէ ան որ քրեանէ զԱստուած կը մեռնի: Ասիկա անհարկի մտահոգութիւն մըն է, որովհետեւ զԱստուած եթէ ուզեն քրեանել իսկ չեն կրնար: Մարդ գիտէ թէ միշտ Աստուծոյ պահանջած կարարելութեամբ չի կրնար ապրիլ, հետեւաբար, այս չափանիշներու քարքերութեան պարճառով մարդ կը վախնայ Աստուծոյ ներկայութենէն: Նոյն այս մարդկային ըմբռնումը Աստուած կ'օգտագործէ դաստիարակելու համար զիրենք: Նաեւ ի հակասութիւն կուքերու, Աստուած միշտ կենդանի երեւոյթներով կը յայտնուի՝ կրակ, ամպ, որուն դիմաց մարդ կը սարսափի: Բայց Մովսէս կ'ըսէ, որ չվախնան, որովհետեւ Աստուծոյ նպատակը մեզ վախի մէջ պահել չէ, այլ՝ որպէսզի այդ վախը դառնայ իրենց առիթ՝ ներքին իրենց կեանքը քրեանելու:

«Ես ձեզի հետ երկիքնէն խօսքեցայ» արտայայտութիւնը, որ զինք չնոյնացնեն այդ նշաններուն հետ: Միւս կողմէ, նաեւ ըսել կ'ուզէ որ Աստուած ներկայ է ամէն քրեղ, սեղան մը շինելու կապակցաբար, Աստուած կը պապուիրէ չքաշուած քարով շինել: Այսինքն՝ ջրանդակուած, որ դարձեալ զգուշացում մըն է կուք շինել: Իսկ սեղանին բարձր ըլլալը եւ մերկութիւնը չերեւիլը կապ ունի հեթանոսական որոշ երեւոյթներուն հետ, որպէսզի մարդոց միտքը չշեղի ճշմարիտ աստուածաշարութենէն: